

ՁԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 Ձր.
Տարեկան	6 "
Վեցամսեայ	15 "
Մասնատուներու համար տարեկան	8 "

Աւերիկայի համար	3 զր.
Տարեկան	4.50 "

Մանուկներու տարեկան համար 10 ս. իսկ վերջին երեսի համար 20 սակրիս կ. երեսին աւերիկայի համար 20 0/0 զեղյ կրչ

Վաճառքի համար ձեռք 10 սակրիս

ՁԱՐԹՈՒՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԳՏԱՐԱՎՈՒՄԻ ՉՈՐԵՔԵՆԱԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ որ կից հարկադրութեան հասցիին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Rodaction du journal „Charjourn“ Varna (Bulgarie)

Արտատուներու համար ձեռք (20 ՍԱՆԹԻՐ) Պուշկարիոյ համար ձեռք (15 ՍԱՆԹԻՐ)

Գրութիւնք եւ չեւ տրուիր

ՇԱՐԹՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆՎՈՐԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԿԻԿ ՎՃԱՐԷ

ՀԻՒԱՆՁՈՏ ԵՐԵՒՈՅԹ

Անցեալ օր մեր խմբագրատան մէջ ստացուեցան 150 ի երկու հատորները նուիրուած Գրիգոր Արծրունիի յիշատակին։ Սա մեր մեծ և տաղանդաւոր հրատարակագրի մանրամասն կենսագրութիւնն է և անոր այնքան բազմակողմանի կեանքի ուսումնասիրութիւնը։

Լէօ, հայ հրատարակագրութեան շնորհալի տիպերէն մէկը, կարողացած է լիովին ըմբռնել և վեր հանել Արծրունիի պէս մեծ գէմքի մը հոգեբանական նոյնիսկ ամենանուրբ գիծերը։

Հարուստ ծնողներու զաւակ, բարձրագոյն դպրոցներ աւարտած, Յիւրիխի համալսարանին մէջ ընկերաբանութիւնը ուսումնասիրած և այսպէս զինուած եւրոպական քաղաքակրթութեան ու գիտութեան զէնքերով Գրիգոր Արծրունի իբրև աստղ մը կիցնէ իր բարձունքներէն հայ կեանքի մէջ գործելու և կը դառնայ մեր հրատարակագրութեան հայրը։

Արծրունիի «Մշակ» զեկազարդ կը հանդիսանայ կովկասահայ գրականութեան մէջ և անոր կուտայ լուրջ և բեղալիտական հաստատ ուղղութիւն մը։

Այս երեւոյթը հայ կեանքի պատկերին մէկ կողմն է, որը վարդագոյն է ու գեղեցիկ, Գրիգոր Արծրունիով մենք ամենքս ալ հպարտ ենք։ Բայց ցաւելով պէտք է խոստովանինք թէ տաճկահայերս չունեցանք Արծրունի մը, որ հրատարակագրութիւնը հասցըներ որոշ բարձրութեան մը զնելով զայն գիտական եւ հասարակական հաստատուն հիմունքներու վրայ։ Արդիւ՞ք։ Արդիւնքը այն եղաւ, որ մենք ունեցանք և դեռ ունինք անգոյն և այլսեռուած հրատարակագրութիւն չ'ը։

Պուսոյ անհեթեթութեամբ եւ դէպի տպագրական խօսքը իր ունեցած թեթեւ վարմունքով փնացած մամուլին վրայ բնաւ

իսկ չը խօսելով՝ ակնարկ մը նետենք արտասահմանի հրատարակչեւ ուղղող թերթերու վրայ և իրականութիւնը կը պատկերանայ մեզ իր բոլոր տխուր կողմերով։ Նոր՝ օր և ահա նոր թերթ մը արդէն լոյս տեսած է։ — Թող ներուռի մեզ այստեղ փակագիծ մը։

Հայ մը անգամ մը իբրև հայասրի կը դիմէ Պիէր Բիշարին, որ իրեն աշխատելու համար գործ մը ճարէ։ Փրանսացի հրատարակագիրը դիմացը հայ մը տեսնելով տրամաբանական հետեւողութեամբ կը կարծէ, թէ անպատճառ պաշտօնակցի մը, այսինքն հայ խմբագրի մը կամ ժուրնալիստի մը հետ է, որ կը խօսի ու կը հարցնէ «որուք ՚ի՞նչ թերթ կը հրատարակէք»։ Մեծ կը լլայ Պիէր Բիշարի զարմանքը, երբ հայը կը պատասխանէ, թէ ինք թերթ չի հրատարակէր, այլ պարզ աշխատաւոր մըն է։

Այս անկէտտաի մէջ կայ դառն ճշարտութիւն։ Մտաւոր ամէն պաշարէ, կեանքի ամէն ուղղութենէ ու գոյնէ զուրկ մարդիկ խմբագիր կամ հրատարակագրող դառնալու տէնդէն բռնուած ողորդեր են հրատարակչը և ստանձնոր իրենց չափէն վեր գործեր, գործեր, որոնց տալիս համալսարանաւարտ եւրոպացի իսկ վայրկեան մը կանգ պիտի առնէր և պիտի խորհէր։ Կայ անիցաւալին, Մարգիկ, որոնք կեանքի մէջ պարապ, ու է զբաղմունք ու գործ չեն կարողացած ճարել հացի մը ստակ հանելու համար անպատճառ կուղեն կամ վարձապետ դառնալ կամ խմբագիր։

Արդիւնքը։ Ս' արդիւնքը յայտնի է, անոնք կը սրբապղծեն տպագրական խօսքը՝ ոտնակոխ ու վարկաբեկ ընելով անոր բարձր նշանակութիւնը ու փոխանակ ընթերցանութեան առողջ նիւթ մատակարարու հասարակութեան կը հրամայեն խաւար տգիտութեան թոյնը։

Այս կարգի խանութպանական հրատարակութիւններով, թերթերով և տգէտ խմբագիրներով առասու-

օրէն օժտուած է նաեւ Բուլղարահայ գաղութը։ Անկէ զուրկ չեն արտասահմանի բոլոր այն վայրերը, ուրտեղ հայեր կապրին։

Երեւոյթը հիւանդոտ է։ Իսկ բժշկութիւնը։ Ս' բժշկութիւն միայն ատեն ատեն կարելի է յուսալ, երբ հասարակութիւնը արթնայով իր խոր քունէն կը դառնայ խոտապահանջ և իբրև գիտակից ոյժ կորգեգրէ Արծրունիի գծած ուղղութիւնը։

Տգիտութեան մէջ խարխափող ու մոլորեալ հայ ժողովրդին համար երանի թէ շուտ գար ցանկալի այդ օրը...

Մարգարէտեանի

ԹՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Կ. Պուլէն Յայրին գրուած թղթակցութիւններէն կը քաղենք հետեւեալը։ «Սեւ ծովի եզերքի և ուսական սահմանին վրայ գտնուող նահանգներու թիւրք զազաբնակութեան մէջ, ուր խնդ թիւրքը կզգայ ուսերու մտաւորութիւնը, Բորթ-Արթուրէն եկած առաջին լուրերը պատճառած են մեծ ուրախութիւն։

Էրզրումի և Տրապիզոնի մէջ ճարտարական շէնքերու ստեղծումը տեղի ունեցած են ցնծութեան ազդրկալի ցոյցեր։ Ասոր վրայ ուսական զեպարներ Ձիւնովիէլ սուլթանին գիւմեց և նոյնորինակ ցոյցերու առջեւը աննկու համար փափաք յայտնեց, որ թիւրքի մամուլը ապագային լռէ այն լուրերու մասին, որոնք Ռուսիոյ համար աննպաստ են. ան յայտնից, որ հայկական յեղափոխութեան ատեն Ռուսիոյ մամուլին նոյնպէս արգիւրուած էր այդ մասին խօսիլ։ Բայց հարց է, թէ Ռուսիան այդ քայլը չընէ՞ր առաւ, թիւրքիոյ նկատմամբ իր ունեցած փափկանկատութեան համար, թէ աւելի վախճալով որ Ռուսիոյ զժգո՞հ և գերեալ ժողովուրդները օրինակ կանեն անարգ լուծի մը դէմ եղած բուռն բողոքներէն։ Ինչ որ է հիմա թիւրք կառավարութիւնը, այսինքն Սուլթանը, այսպէս թէ այնպէս հնազանդեցաւ և հրամայեց, որ Ռուսիոյ աննպաստ բոլոր լուրերը, հեռագիրները եւ այլն թիւրք թերթերէն մէջ չընդունուին, ուրեմն հիմա անոնց մէջ շարունակ կը կար-

գացուին ուսական յողթանակներու մասին։ Բայց թիւրք ժողովուրդը լաւ կը ճանչնայ իր հայրանիստ կառավարութեան հոգածութիւնը և լուրերը կանոնէ գործի տեղեակ մարդերու միջոցաւ օտար թերթերէ, այնպէս որ թիւրքերը իրենց հետաքրքրութիւնը կը յագեցնեն առանց թրքական թերթերու ալ Ձիւնովիէլ ուրիշ նպատակ մըն ալ ունէր։ Ռուսիոյ մէջ ապրող Մահմետականները լուրերը կանեն թիւրք թերթերէ։ Ասով հիմա անոնք ալ անտեղեակ կը մնան պատերազմի անցքերէն։»

Միւնչեռն առջին պետութեանց գործակատարները դպրոցական ու եկեղեցական հարցերով գլուխին կուռնեցնեն և Սուլթանը երկու օտար դեպքաններու հետ ուսականական կազմին համար հոգի կանոնէ, հոգի կուտայ, անդին ճաքովա, Իփէք և ուրիշ տեղեր կը գտնուին բացարձակ ապստամբ դրութեան մէջ, թէեւ հոն առ այժմ զինադադար հռչակուած է թիւրք զօրքերու և սլականացիներու միջեւ, բայց այնտեղի սերպերը մատնուած են աւազակաբարոյ ալպանացիներու կատաղի վրէժխնդրութեան։ Ապստամբութիւն հռչակուած տեղերը օրէնքը վերցուած է։ Ալպանացիները Սուլթանի և խաղաղութիւնը պահպանել ցանկացող զիւնազէտներու դէմ ասորին նոր յաղթանակ մը եւս։ Շէմզի փաշա, որ քանիցս յաջող կերպով զսպեց ալպանական ապստամբութիւններ, այժմ պաշտօնանկ եղած է։ Անոր տեղ եկած են Իւսքիւպէն Ֆէրիտ և Բէֆուլթ փաշաները, որոնք երկուքն ալ կարող զինուորականներ են։ Պաշտօնանկ եղող Շէմսի փաշա փառաւոր կազմուածքով և կամքի ոյժով սէր 5։ տարեկան մարդ մըն է, որ թիւրք Յուսական պատերազմին մէջ անուն հանեց։ Ասկէ վեց տարի առաջ ան իբր հրամանատար երրորդ զօրաբանակին եկաւ Միթրովցա։

Ռուսական հիւպատոս Ձէրպինայի սպանման ատեն Շէմսի փաշա իր գունատով քալեց ալպանացիներուն վրայ և յողթեց զանոնք։ Շէմսի փաշա նշանաւոր գործ մը եւս կատարեց խաղաղացնելով Լէյուժա կողուող ալպանական ցեղը, որոնց ապստամբութեան գլուխը կանգնած էին երկու իրենց քաջութեամբ յայտնի ցեղապետներ — Շաքիր Բալուչ և Մուսթաֆալիտա — Շէմսի փաշա իր կողմը գրաւեց Շաքիր Բալուչը և զօրքով ու թնթանութներով անոր ամբացուցած տեղը երթալով զայն համոզեց և անկէ առաւ ապստամբութեան զեկա-

վարներու անունները, որոնք չու-
տով ձերբակալուեցան, բայց քիչ յի-
տոյ Շաքիր-Բալուչ ինքն ալ Տիգրա-
նակերտ աքսորուեցաւ : Այս դէպքե-
րը պատահեցան 1903 թուականի
գարնան ի մեծ ուրախութիւն Սուլթա-
նին : Եւ հիմա ալ պանայինքը զսպող
նոյն մարդն է, որ պաշտօնակի կըլլայ :
Չնայելով այս բոլորին Ալպանիոյ
հիւսիսային բնակիչները դժգոհ մնա-
ցած են Շէյխի փաշայի հետազուտէն,
որովհետեւ փաշան իր խիստ արդա-
րասիրութեամբ զինքը այնտեղ սիրելի
դարձուցած էր :

Սակայն ո՞վ գիտէ խեղճ մարդը ի՞նչ
դաւերու գոհ գնաց :

ՍՐԻԻԼ-ՀԱՄԻՏԻ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ

Արագ ընթաց գիտութեան ու կա-
տարելութեան հասած արուեստակա-
նութեան այս շրջանին մէջ, որ
մեծ կարգին, յիստի տարօրի-
նակ կըլլար բոնի, ինչ մարդ մը քը-
ժիկութեան հետ կրնայ կատարելա-
պէս մրցել : Եւ ինչ օտարտի տեսա-
րան—եւ ի՞նչ դաս—տեսնել մարդ մը
բարդ յուզմունքներէ մաշուած, ան-
վերջ սարսափներէ տանջուած, թե-
րեւ իր նմանը չուրեցող ուղեղային
աշխատանքով մը ջանքատուած,
որը կը մերժէ մեր արուեստին օգ-
նութիւնը, մինչև իսկ երբ բժշ-
կութիւնը կարելի է. եւ կամ յետոյ
ըլլայ ձանձրութիւն, ըլլայ կտակածէն
կընկնի բժշկութեան ոտքը : Այս
պայմաններուն մէջն էր, երբ նորին
վեհափառութիւնը հաւանութիւն տը-
ուաւ, որ ինչը ինչ—իր որդեգրու-
թեան հայրենիքէն—հռչակաւոր բը-
ժիշկ մը բերուեցաւ : Կարծեմ Պրո-
ֆեսոր Սենատորն էր : Բժշկին նա-
ւէն ցամաք ելլելը գիշերը կատար-
ուեցաւ : Վարպետը գոց կառքով մը
պալատ տոսջնորդուեցաւ, գրեթէ
ոճրագործի մը նման եւ գաղտնի

ԶՍՊԻԱԾ ՔՐԲԻՉԸ

Նուեր Ա. Անարոնեանին
Ա. 2

Ահա այնտեղ, այս սարի լեռները,
—այնտեղից է սկսում սեւ շղթայի
ծայրը—ահա անօրինները խողի-
թում են անմեղ մանուկներին, որի
ծայրին բարձրացնում նրանց այլան-
դակ մարմինները բարձրացնում լեկ-
տի, բարբարոս հոհուցը : Ահա իր
կինը, սիրուն Մօնան ընկաւ, ըն-
կաւ մի շարք սրբերի անունները մը-
մնջալով : Ահա իր ջահիլ-ջիւան, կա-
րիչ Աւստն, հեծկուում, թըպրտում
անողը, անխիղճ հարածների տակ :
Ահա եւ ինքը ունում է, ամբողջա-
պէս ջիղ դարձած, որպէս տղուկ,
կպել է անօրէն քրդի կրծքին, ցա-
տումով լցւած, կրճում նրա կոկոր-
դը, ասես ուզում է այնտեղից ծծել,
քամել ամբողջ կենսական հիւթը :
Ահա... եւ այդպէս անվերջ շարու-
նակում է սեւ շղթան, բոլոր օղակ-
ներն էլ մէկը միւսից դաժան, մէկը
միւսից ահաւոր, մէկը միւսից արեւ-
նոտ :

Եւ այդ բոլորի առաջ հսկայ, խոր-
հրդաւոր ձերուներու քարտերսք փու-
կկաւ, աչքերը թացացան, արտե-
ւանունքի կախեցին երկու կա-

անցքով մը Սուլթանին մօտ տար-
ուեցաւ : Ժողովուրդը չպէտք էր ի-
մանար բժշկական այս խորհրդակցու-
թիւնը, չէ՞ որ ինչ գնով ալ որ ըլ-
լայ Սուլթանի հիւանդութիւնը անկէ
ծածուկ պէտք է պահել :

Ամէն շաբաթ՝ ուրբաթ օրուան
շարքատակ կանոնական ազոթքը
կայ, որուն խալիֆաները պէտք է
մասնակցին, եթէ չեն ուզեր իրենց
դիրքը ոչնչացած տեսնել այդ սե-
լամըզն է, կարծեմ ինչ Ապտիլ Հա-
միտը իր երկարամեայ թագաւորու-
թեան ընթացքին՝ անգամ մը իսկ
չէ բացակայած : Այս պարտականու-
թիւնը այնքան ուժեղ է, որ հոգեւ-
ւոր վեհապետները, թիկնապետնե-
րէն երեսներն ներկուած եւ պաշտպա-
նուած՝ պարտաւոր են դալուրուիլ
մինչև մզկիթը, հրապարակաւ,
զուարթ զէմք մը ցուցնելով, օ՞վ գի-
տէ արդեօք ի՞նչ ճիշդով կատար-
ուած շարաշար համբերութեան գն-
ով : Պատմութեանէն գիտենք, ժեղք. դը-
րի մէջ, ժողովուրդը կը ծափահարէր
այն Սուլթանին, որ մզկիթ երթալու
պահին զկուտ ու վեհափառ արտա-
յայտութիւն մը ցոյց կուտար, այ-
սինքն զիսկ մըն էր, որ հնդկական
գահաւորակի մէջ զրուած կը փոխա-
դրուէր :

Վերագտնալով պրօֆէսորի խոր-
հրդակցութեան, տեսնելք թէ առանձ-
նաներակին մէջ ի՞նչեր անցան գոր-
ծան : Եթէ յիշողութիւնս զիս չի խա-
րեր, իր սենակապետներէն մէկը,
որ այժմ կիրպրոս հեռացուած է, կը
պատմէր ինչ Սուլթանը լուրջ կերպ
րանք ցուցած է գերմանացի բժիշկի
քննութեան միջոցին, բայց բժիշկը
հեռանալուն պէս բացադառնած է :

— Ա՜հ, թան ալըն ճանըն : Եւ
կարդալու է անոր վճարել 4000 ոս-
կի, աւելցնելով—հարամ օլունն :
Հոգեկան այս վիճակի մէջ, անոր
մաստցուած գեղերը ի հարկէ անօ-
գուտ են : Եւ վերջապէս կը կարծէք
թէ ան իրաւունք չունի՞ փճացնելու

թիլ արտասուքներ եւ ընկան այտե-
րի վրայ : Այդ նկատեց միւս Ջօնը.
նա ամբողջ ժամանակի զիտում էր Ա-
ւօի ամեն մի շարժումը, հետեւում
նրան : Այդ արտասուքները ընկան
միւս Ջօնի սրտի խորքում, նա ընկ-
ճուեց զրանց տակ, ընկճեց այդ լուռ,
բայց դաժան ձերուներու մեծ վշտի,
սար գորդի առաջ եւ մի տեսակ
քաղցր զգացումներով լցեաց զկպի
նա, առանձին մղում զգաց իմանալ
նրա ցաւը, այդ քար սրտի դարձը
նա զգաց, զգաց, որ Աւօն օւնի վիշտ,
դարդ, որը ծանրացել է նրա սրտի
վրայ, կնճիտներ է ակօսել զէմքին
եւ դարձրել նրան տարօրինակ,
խիստ մութ, բայց ուշաքառ անձ-
նաւորութիւն :

— Աւօ, ձայնեց միւս Ջօնը :
Այդ կանչը հանեց Աւօն արեւնոտ
աշխարհից, պոկեց սեւ, ահաւոր մը-
տածմունքներից, եւ նա դարձրեց իր
վշտոտ, թախմալի զէմքը զկպի
Միսսը :

— Աւօ, կրկնեց միսիոնարուհին
առանձին քնքուշ, կարեկցական տօն
տալով իր խօսքերին, եւ ինչպէս
տեսնում եմ, դու ունես մի դարդ,
որ կրճում, ցուցնում է քո սրտը,
տեսայ թէ ի՞նչպէս արտասուք կա-
թեց աչքերիցք. սաս, պատմիր,
Աւօ, եւ հաւատա՛, առանց հաւատի
միշտ էլ կը տանջուես :

— Այնտեղ, խանձ, սրտիս խորքե-

բոլոր այս խառնի-խուռն գեղերը,
որոնց մէջ եղած թոյնի անասմանօ-
րէն փոքր մէկ փոշին կրնայ զինքը
ճանճի մը պէս սատկեցնել : Ինքը նը-
չանստ որ թոյն պատրաստող մը շատ
լաւ կը ճանչնայ որոշ նիւթերու թու-
նաւոր ազդեցութիւնը, որոնք բեր-
ուած են Եգիպտոսէն հեթանոսներու
զերվիչի մը ձեռքով և պատրաստուած
թօթական աղանդի պատկանող հին
քուրմերու ճշգրիտ դեղատոմսերուն
համեմատ : Այս զերվիչը, որ էօմէր
վէջնտի կըսուի, Եգիպտոսէն տակ
կապրի և իր սէրը զայն կը ծածկէ
խարեգործութիւններով թերեւս ժա-
մանակ առ ժամանակ կը թողու, որ
ան քննէ զինքը :

Ըսինք որ այս խորհրդաւոր պատ-
րաստողը հեղինակն է «սեւ սուրճին» :
Սեւ սուրճը կը խօսի ատոր մասին և
համբաւը այնքան սխուր է, որ ա-
տոր քով «սեւ սուրճին» ընտա-
նական պարզ խոյ մըն է : Տաճկա-
կան սուրճը ել մէկն կու գոյ : Այստե-
ղէն յետոյ, անկէ կը պատրաստուի
մեղրեայ ըմպելիք մը, որու սքանչիլ
բուրմունքը երկնագոյն շուշանը կը
յիշեցնէ քիչ մը և հոտոտեկեաց ըզ-
ժայլակը կուտայ :

Այսպէս բնական կերպով, առանց
օտար բոյսերու խառնուրդի մը մա-
տուցուած սուրճը, իսկապէս աստուա-
ծային ըմպելիք մըն է : Երկտասարդ
արեւելքցիներու համար աւելի կըբոս
հաճոյք մը գոյութիւն չունի, քան
այս ըմպելիքը խմելը միաժամանակ
ձխելով Ստամբուլի գլանակները.
այս բանը հարեմի կանանց ուրախու-
թիւնն է. բայց երբ մարդ կուզէ
զայս մատուցանել այն մարդկանց,
որոնցմէ ճարպիկ կերպով ազատուլ
կուզէ, պատճառելով անոր արագ և
ախորժելի մահ մը. այլու՞մի ժամա-
նակ անոր կաւելցուի սուսազ ծառի,
պրիյօնի, կառասիօի, անէձօնի, ա-
զօնիղի և սեվտալի հիւթերէն. այս
վերջի երկու հիւթերը—մանաւանդ

րում ոչինչ չկայ քեզ հետաքրքրի.
այնտեղ ամէն ինչ սարսափելի է.
այնտեղ կայ անասման վիշտ, ար-
դար ցատում, սեւ, այլանդակ մըտ-
քեր, զուտ հաւատացեալներից՝ հա-
մար ահաւոր, սարսափելի խոհեր,
իսկ փայլուն ոչինչ չկայ : Մի քրք-
րէք այդ, խանձ, լաւ է շարունա-
կես ճանապարհը, այդ ձեռնաուտ չէ
քեզ :

Նա լսեց, ամբողջ մարմնով հար-
ւածեց ձիուն, ասես սյգպէս ուզում
էր եւ հարածել իրեն պաշարող սպա-
նիլ մտքերը, եւ այդ կատարեց
համարեա անգիտակցաբար : Միսսը
ոչինչ չկարողացաւ պատասխանել,
նա էլ հետեւեց Աւօի օրինակին,
ինքն էլ ասպանեցեալ եւ լուռ մը-
մնջաց. — օ՞վ Տէր, քո հսկող աչքը
թող սրա վրայ լինի, այս անձար
մարդի. նա ինչ որ անում է, ով
Տէր, անում է անգիտակցաբար : Նա
սխալ ճանապարհի վրայ է կանգնած.
օ՞վ Տէր, դու փրկիր, դարձի բեր
նրան, ով Տէր...
Բ.

Անցան նրանք վերելքը եւ մասն
մի փոքր, բայց վտանգաւոր ձոր,
Այդ ձորից դուրս գալիս արդէն բաց
ւում է ճամբորդի առաջ Ուրմի գա-
ւառի ընդարձակ հարթութիւնը : Հա-
րուտաւ եւ գեղեցիկ է այդ փոքրիկ
երկրը, այնտեղ ապրում է մի բուռն

ամենավերջինը, «սեւ սուրճի» հիւթը
կը կազմեն. բնականաբար եւ կար-
ձանագրեմ այս տեղեկութիւնը—թե-
րեւս պակասաւոր—հաւատով այն
մարդուն, որ ինձ տեղեկացուցեր է,
այսինքն իշխանին հին կաթիլներնե-
րէն մէկը, զոր առիթն ունեցայ տես-
նուելու 1896ին Աթէնքի մէջ, ուր
այս մարդը եկեր էր հանգստանալու.
Թիւրքիայի թոյներուն շարքին մէջ
յաճախ կը մտնեն նաեւ էլէպորը և
դափնին. գնչուները շատ վարժ են
Եգիպտոսէն ներմուծուած բոլոր այս
գաղանիքներուն. անոնք կը փրնու-
ան կը գտնեն այս բոյսերը, որոնց
կարգին պէտք է հաղուել նաեւ զօւ-
շիքը, լուսնի որոշ շրջաններու մէջ :

Ասոնք հրաշալի կերպով կը հասկը-
նան, խոտերու այս հիւթերով ամէն
տեսակի թոյներ պատրաստել, ա-
սոնց մէջ կան զանազակ և վայրկեան,
կան սպանիչներ՝ նայած թէ ինչպէս
կը ցանկանայ գնողը—գնողիկները
հանրապէս. մեծերը մանրամասն ըն-
դեկութիւն կառնեն բոլոր այս ծա-
ծուկ թուներու թեւեւ մասին. Ա-
րեւելքի մէջ կիսաքի ժամացոյցի ե-
րեսի վրայ մէն մի վայրկեան կը
տեսնու ծածուկ կամ հրապարակա-
կան ողբերգութիւն մը :

Բայց դառնանք վեհապետին. տա-
սը տարի կայ, երբ անկարելի եղաւ
սերայի պահպաններուն արգիլել,
որ անոնք հաւարակութեան իմացնեն,
թէ միապետի սաստկացած հիւան-
դութիւնը անհրաժեշտ կը դարձնէ
նախարարական գերագոյն ժողովի
և Շէյխ-իւլ-իսլամին նոր տեղակալ
ընտրել. յետոյ այս լուրը ներքին
գործերու նախարարութիւնէն տրուած
տեղեկագրով մը հերքուեցաւ մտաւ.
ին մէջ. այս պաշտօնական հարը-
գազրութիւնը խաբեբայութիւն մըն
էր :

Սուլթանը հեղապալս կը տանջուէր
թափանի մուտքի եզրերին վրայ գո-
յացած ուռեցքով մը և ամենաքիչը

քրիստոնէս ժողովուրդ : Ինչո՞ք եւ
հարստահարած է նա : Ահա այդ մի
ակի քրիստոնիաների մօտ է շտապում
միւս Ջօնը : Այդ ժողովուրդը լաւ
հաւատացեալներ չեն, պիտի նորից
քրիստոնէս դարձնել, նրանք ճա-
նապարհից գուրս են եկել, պիտի
դարձի բերել, նրանք մոլորած ոչ-
խարներ են :

Երկուսն էլ լուռ էին, երկուսն էլ
մտազբաղ : Սպանիչ էր այդ լուռ-
թիւնը. առաջ գոնէ Միսսը խօսում,
պատմում էր. այժմ նա էլ լուռկեաց
դարձաւ, ասես նա վարակեց Աւօ-
ից, ասես նա էլ ընկաւ ծանր, ժա-
շող մտքերի աշխարհ : Եւ լուռ զը-
նում էին : Յանկարծ բլրի լեռնից
լսեց սուրը. արձագանքը պատաս-
խանեց. էլի՛, էլի՛... Այս անգամ
պատասխան ստացեաց մէկ երկու տե-
ղից, Դա չտրագուչակ նշան էր : Ա-
ւօն կանգ առաւ եւ մկեց լսել,
կանչեց եւ Միսսը սարսափած և Ա-
ւօն լսեց, լսեց եւ առաջ ասպան-
դակեց ձին, նրա օրինակին հետե-
ւեց եւ միսիոնարուհին : էլի՛, էլի՛...
սուրբի ձայները աւելի ու աւելի
խորհրդաւոր կերպարանք էին ստա-
նում եւ լուռում աւելի ու աւելի մը-
տիկեց :

Միսս Ջօնը զոգում էր եւ նրա
չրթունքները անգիտակցաբար սկսե-
ցին մրմնջալ ինչ որ աղօթք :
— Կանգնեցէք, յանկարծ հէնց

ԱԶԴ

Ի՞նչ շարունակ յանձնարարութիւններ կը լինին Վառնա հրատարակող «Վիպակներ» կոչուող թերթին համար: Թէեւ այդ թերթի յայտարարութիւնները «Շարժում» ծրարներուն մէջ կայուն լով ցրուած են, բայց այդ եղած է սխալմամբ և առանց մեր խըմբագրին գիտութեան: Ուստի ներկայով կը յայտարարենք, որ մենք ու է կապ չունինք և չենք ալ կարող ունենալ այդ օրինակ տէնդէնցիէօզ ու անբարոյականացոյցիչ քրոմաններով թիւում անգոյն և աննպատակ թերթի մը հետ, որը դարձեր է Երուանդ Սրմաքէշլուանի կողմէն գրգռող արտաքուտ, սոցիալական ինկամ մարդու մը անձնակազմի կիրքերուն օճակներ և որու գոյութիւնը իսկ հայ հասարակութեան համար անպատուաբեր է: Ի նկատի չեն առնուած և այսուհետեւ ալ չպիտի առնուին այդ թերթի համար մեզ եղած գիմումները:

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Կիրակի կատարուած է Վառնայի թաղակ. խորհրդի ընտրութիւնը: Ահա ընտրուողներու ցանկը.

- Խաչիկ Այնաւորեան 223 ձայնով
- Նիկողոս Գէտանեան 216 "
- Յովհաննէս Քոչունեան 207 "
- Սարգիս Հաճօլեան 205 "
- Մինաս Առաքելեան 193 "
- Յովհաննէս Ճամճեան 123 "

Գրիգոր Յովհաննէսեան և Մասաթիա Սուքիասեան չկրնալով ստանալ ընդհանուր քուէներու կէսը իրենց ընտրութիւնը մնացած է անօրոյ:

—Մշտնի ազգայիններու շրջանակներէ կիմանանք, որ անոնց կ. Պոլսոյ մէջ վաճառական մշտնի Սարգիս Պրահեանի միջոցաւ հայրենիք շրջան ստակները տեղերը չեն հասած և արդէն կորսուած են բաւական գումարներ: Իոյն ազգայինները կը զգուշացնեն իրենց հայրենակիցները այդ վաճառականին միջոցաւ երկիր ստակ դրփել, որովհետեւ ան իր գործերը դադարեցուցած է ու այլեւս չի կարող ստակները ապահովապէս որոշուած տեղերը հասցնել:

—Պարկազէն Մկրտիչ Յարութիւնեան՝ նախկին արմէնական իր մօտ գտնուած 120 ֆր. 50 սանդիւնէն Պ. Հրահատ-Կամարի միջոցով ի նպաստ Հ. Յ. Դաշնակցութեան շրջան է 60 ֆր. 25 սնդ:

—Հ. Յ. Դաշնակցութեան Թիւրքաթիւրի (Ամերիկա) կոմիտէն հրապարակային ժողով մը ունենալով ի նպաստ երկրի կռուողներուն մէկ անգամէն հազանակած է 6431, 30 ֆր. Հանգստանա-

կութիւնը կը շարունակուի: —Ռուսոյ հայ եկեղ. կալուածներով վարչութիւնը 25 անկողնոց շրջուն հիւանդանոց մը շինել տուած է պատերազմի մէջ վիրաւորուող զինուորներուն համար:

Աւազակները սկսեր են վայելել բայց պատերազմը այդ վայելքն ալ պիտի խլէ իրենց ձեռքէն: Ժողովուրդը արդէն սկսեր է ըսել թէ Հայրիկի անէճքը բռնիք:

—Կեսարիոյ Ս. Կարապետի նոր վարժարանին շինութիւնը անարտած է և սկսած են գառախօսութիւնները նոր ծրագրով:

Կեսարացիներու վերջին տարիներս ցոյց տուած կրթասիրութիւնը պատիւ կը բերէ իրենց:

Լաւ կընեն երբ Վառնայի մէջ ապրող կեսարացիները նուէր մը շրջան հայրենի գաւառի նորակառոյց վարժարանին:

—Յովհաննէս Տարրճեան 8000 ֆրանքով շէնք մը կառուցանել տուած է, անկէ եկած հասոյթը էրպոստի վարժարանին յատկացնելու համար:

—Սօֆիայի յանձնաժողովը Կրաստ է Պատրիարքարան, որ Առաջնորդ Ներսէս եպիսկոպոսը մինչեւ Զատիկ անպատճառ հասնի իր պաշտօնատեղին:

—Մուշի մէջ Յովհաննէս քհ. վարժապետեան մեռնելով 12,000 ֆր. կտակ մը ձգած է իր անուամբ վարժարան մը բանալու համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Մովակալ Թօկօ Մարտ 10ին (ն. Տ.) անգամ մըն ալ երեցած է Բօրթ-Արթուրի առջեւ և զայն ումբակոծած: Առաջին յարձակումէն ետքը ձարնական տորմիլը վրատիփօսաքի վրայ գործած է երեք անգամ յարձակում և քաղաքին մի մասը կրակի տուած: Ռուսերը այս բոլորին հանդէպ բռնած են պաշտպանողական դիրք: Թըշնաօնոյն կրակին պատասխանած են միայն վրատիփօստքի ամբուլթիւնները, տորմիլը մեկնած է և դեռ չէ վերադարձած:

—Բօրթ-Արթուրի մէջ գտնուող ուսական տօբպէտօնաւերը նաւահանգիստէն դուրս գալով յարձակում գործած են ճտրոնական տորմիլին վրայ: Բաւական լուրջ կռիւ է յետոյ ուսական նաւերը ստիպուած են ետ քաշուիլ: Ընկղմած են երկու կողմէ ալ մերմէկ տօբէտօնաւեր: Այս առթիւ ճաբոնացիները շորս ժամ շարունակ ումբակոծած են Բօրթ-Արթուրը և հասուցած մեծ զուսներ:

—Ռուսերը ուղած են վիրու-

նոր զօրք շրկել, բայց գետի յորդանալուն պատճառաւ չեն յաջողած:

—Եւրոպական թերթերը քանիցս հազորդեցին, որ ճարնացիք զօրք հանելով գրաւած են թաքուչանը և մէտնկվանկչօնկը, եթէ լուրերը ճշգրտին ատով ճաբոնացիք գրաւած կը լին շատ կարեւոր կէտեր, որովհետեւ անոնք այդ հաշուով Եալուր ուսական բանակը իր կոնակէն պաշարած կը լին:

—Բօրթ-Արթուրի ուս զօրքին մէջ սկսած է յուսահատութիւն և վհատութիւն տիրել: Պայաներուն մէջ ծագած են անհամաձայնութիւններ:

—Քուրաթքին արդէն ճամբայ եղած է դէպի Մայրաքոյն Արեւելք, կայարանը ներկայ զըտնուած են Նիկօլա մեծ իշխանը, Մէքլէմպուրկի զըտնուհին, բոլոր նախարարները իրենց զուլու ունենալով տխրահուշակ Բլէվէն, բարձր դասակարգէն տիկիները և պարօներ: Նախարարները համբուրած են բաժնուող զօրավարը, կիները նուիրած են սուրբերու պատկերներ: Բաժանումը ձգած է ծանր տպաւորութիւն:

—Ճարնական ձերակոյտը որոշած է 50 միլիոն Եէն հասարակական շինութիւնները դադարեցնելով և 70 միլիոն Եէն պատերազմական տուրք մը դնելով հանել ի նպաստ պատերազմին:

Ելեւմտական նախարարը արժէթուղթեր հանելով տպահոված է 436 միլիոն Եէն, որը յուսարկերպով վրատիլքարձրանայ մինչեւ 500 միլիոն Եէն:

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

—Թրքական ընդդիմութիւնը թոյլ չի տար, որ պետութեանց գործակատարները Մակեդոնիոյ մէջ գործ մը ընեն և քայլ մը առաջ երթան:

Աւստրիոյ գործակատարը վրէժնա գացած է, երեւի հրահանգներ ստանալու համար:

—Ճաքովայի կռուին մէջ ինկած են թիւրքերու կողմէ գնդապետ մը, սպայ մը և 45 զինուոր, ալպանացիներու կողմէ 151 մարդ:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

«Յայթ» կը հազորդէ, որ հայ ֆէտայիներու շէֆ՝ Սըդրանիկ, որ այժմ իր խումբերով Սասունի շրջակայքը կը գտնուի, փախցուցած է քիւրտի երեք կիներ: Ըրը պէտք ունի ստուգութեան:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Դպրոցական առողջապահութեան համար կայանալիք միջազգային համագումարու մը այս տա-

րի տեղի պիտի ունենայ Նիւրէնպէրկի մէջ՝ իշխան Լուսիկի մէրտինանաի նախագահութեամբ և քաղաքական ակաւաւոր անձերու մասնակցութեամբ:

—Պէտլինի մէջ բնակող ուսները բողոքած են կոմս Պիւլովի իրենց հանդէպ բռնած խիստ վարմունքին դէմ:

Ինչպէս յայտնի է Ռայսլաթակի մէջ սօցիալիստները երկար վիճաբանութեաց նիւթ դարցուցին այս հարցը և պաշտպանեցին ուս յեղափոխականները:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աղատարար կայսր Աղէքսանդր Բ. ի մահուան տարեդարձին առթիւ Սօֆիայի եկեղեցիին մէջ կատարուած են աղօթքներ:

—Նաչովիչի և Դբան միջև բանակցութիւնները դադարած են առայժմ, որովհետեւ մեծ վէճերը մերժած է Պուլկ. գործակատարին առաջարկները: Նաչովիչ առաջարկած է, որ թիւրքիան առանց պետութեանց առաջարկներուն վրայ ուշադրութիւն դարձնելու ինք իր կողմէ Մակեդոնիոյ և Աարիանուպոլսոյ մէջ կարելի եղածին չափ շուտով մրտցնէ՝ հիմնական ըէֆօրմներ, եւրոպացի քրիստոնեայ մը կարգէ Մակեդոնիոյ վրայ ընդհ. կառավարիչ, վերցնէ վալիներու պաշտօնները, եթէ վերջին կէտը անյաջողութեան մատնուի, այն ատեն վալիներու քով կարգէ եւրոպացի օգնականներ ու բոլոր կազմը դնէ ընդհ. կառավարչին հրամանին տակ: Կառավարիչը պէտք է գործէ Ելլաթզէն բոլորովին անկախ ու ինքնազուլի կերպով: Մերժում ստանալէն ետ թը նաչովիչ Սօֆիայէն նոր հրահանգներ է խնդրած:

—Իրզով, Պուլկարիոյ Զէթիւնէի ներկայացուցիչը, յայտնած է, որ ալպանական ապստամբութիւնը կը գրգռուի շարունակ ելլաթզի մէջ եղող պատերազմի կուսակից մարդոց կողմանէ:

Է. ԱԿՈՒՆԻ

«ՊՈՒԿԱՍՏԵԱՆ ՎԵՐՔԵՐ»
Գին 3 ֆր. 20 սթ.
Գնելու համար դիմել Վառնա Բաբկէն Սիւնի ընթացարանին վարչութեան: Ճանապարհածախը գնողին վրայ է: Դրամը կանխիկ վճարելի է:

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Податница „Вѣрность“ Варна